ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

«ՇԻՐԱԿԻ Մ.ՆԱԼԲԱՆԴՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ»
ՀԻՄՆԱԴՐԱՄ

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

ԳՈՐԾՆԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ ՄԻՋԻՆ ԴՊՐՈՑՈՒՄ ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹՅԱՆ ԴԱՍԵՐԻՆ

Կատարող՝ Ցողամարգի միջնակարգ դպրոցի աշխարհագրության ուսուցիչ

Բարսեղյան Գնել Աղասու

Աշխարհագրություն առարկայի վերապատրաստման պատասխանատու՝

աշխ. գիտ. թեկնածու, դոցենտ Գայանե Ավետիսյան

Գյումրի 2023

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ներածություն 3

Գլուխ 1. Աշխարհագրության ուսուցման մեթոդները.....4

1.1. Աշխարհագրության ուսուցման մեթոդների դասակարգումը .....…..4

1.2. Ուսուցման գործնական մեթոդներ և նրանց անցկացման ձևերը աշխարհագրության դասերին 6

ԳԼՈՒԽ 2. Գործնական աշխատանքների կազմակերպումը աշխարհագրության դասերին 12

2.1. Գործնական աշխատանքների կազմակերպումը 6-րդ դասարանի «Մայրցամաքների և օվկիանոսների աշխարհագրության » դասերին 12

2.2. Գործնական աշխատանքների կազմակերպումը 7-րդ դասարանի աշխարհագրության դասերին 13

2.3. Գործնական աշխատանքների կազմակերպումը 8-րդ դասարանի «Ռեգիոնալ աշխարհագրության» դասերին 14

2.4. Գործնական աշխատանքների կազմակերպումը 9-րդ դասարանի «Հայաստանի աշխարհագրության» դասերին 15

Եզրակացություն 18

Գրականության ցանկ ..... …..19

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Երկարատև հետազոտություններն ու ուսումնասիրությունները ցույց են տվել, որ ցանկացած դասապրոցեսի արդյունավետություն կախված է ոչ միայն տեսական գիտելիքների ձեռք բերմամբ, այլ նաև գործնական կարողությունների և հմտությունների ձևավորմամբ: Եվ սովորողների մոտ այդպիսի հատկանիշների ձևավորմանը նպաստում է ուսուցման գործնական մեթոդները:

Գործնական մեթոդները մեծ դեր են խաղում այնպիսի կարողությունների ձևավորման գործում, որոնք անհրաժեշտ են սովորողի ինքնուրույն իմացական գործունեության զարգացման համար և կիրառելի են առօրյա կյանքում, օրինակ՝ թվային տվյալների վերլուծությունը, կառուցողական ունակությունները, ուսուցման տեխնիկական միջոցների հետ աշխատելու և դրանցից գիտելիք քաղելու կարողությունը և այլն:

Աշխատանքի արդիականությունը կայանում է նրանում, որ այսօր ավելի քան կարևոր է դարձել սովորողների մոտ գործնական կարողությունների, հմտությունների և ինքնուրույն ստեղծագործելու հատկանիշների ձևավորումը:

Աշխատանքի նպատակն է ներկայացնել գործնական աշխատանքների կազմակերպման ձևերն ու մեթոդները աշխարհագրության դասերին միջին դպրոցում:

Աշխատանքի նպատակին հասնելու համար առաջադրել ենք հետևյալ հետազոտական խնդիրները:

- Ներկայացնել աշխարհագրության ուսուցման մեթոդների դասակարգումը:
- Նշել ուսուցման գործնական մեթոդների և նրանց անցկացման ձևերի կարևորությունը աշխարհագրության դասերին:
- Մշակել և ներկայացնել մի շարք գործնական աշխատանքների օրինակներ միջին դպրոցի աշխարհագրության դասերին:

Աշխատանքը բաղկացած է 2 գլուխներից, եզրակացությունից, օգտագործված գրականության ցանկից և հավելվածներից, շարադրված է 25 էջի վրա:

ԳԼՈՒԽ 1

ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹՅԱՆ ՈՒՍՈՒՑՄԱՆ ՄԵԹՈԴՆԵՐԸ

1.1 Աշխարհագրության ուսուցման մեթոդների դասակարգումը

Հոգեբանների և մանկավարժների հետազոտություններն ապացուցում են, որ ուսուցման մեջ հաջողության բացակայությունը պայմանավորված է ոչ թե աշակերտի բնածին սակավ ընդունակություններով, այլ ուսուցչի կողմից կիրառվող ոչ արդյունավետ աշխատաձևերով, որոնք ըստ էության, հաղորդում են գիտելիք, բայց չեն սովորեցնում ինքնուրույն սովորել: Սակայն սովորելու կարողությունը ինքնին չի առաջանում, այն ձևավորվում է ուսուցիչ-աշակերտ համատեղ նպատակաուղղված գործողությունների միջոցով: Հետևաբար անհրաժեշտություն է առաջանում մշակել գիտելիքի փոխանցման այնպիսի ուղիներ, որոնք կնպաստեն գիտելիքի արդյունավետ յուրացմանը և սովորողի մտավոր ունակությունների զարգացմանը: Ուսուցման գործընթացում գիտելիքի փոխանցման ուղիները համարվում են ուսուցման մեթոդներ:

Մեթոդը հունարեն metodos բառի հայերեն թարգմանությունն է, որը նշանակում է նպատակին հասնելու եղանակ, ուղի, որոշակի կարգավորված գործունեություն:

Ուսուցման մեթոդները ուսումնական գործընթացի կարևորագույն բաղադրիչներից են: Առանց գործունեության համապատասխան մեթոդների անհնարին է իրականացնել ուսուցման նպատակներն ու խնդիրները: Աշակերտների կողմից կենդանի և անկենդան բնության առարկաների, իրերի, երևույթների ճանաչման հաջողությունը շատ բանով կախված է ուսուցման մեթոդներից:[1]

Ներկա ժամանակներում առավել ակտուալ է դառնում կրթական գործընթացում տարբեր մեթոդների օգտագործումը, որոնք ձևավորում են ինքնուրույն գիտելիքներ ձեռք բերելու, անհրաժեշտ տեղեկատվություն հավաքելու, վարկածներ առաջ քաշելու, եզրակացություններ և եզրահանգումներ անելու կարողություն ձևավորելու ունակությունը կրթական գործընթացում: Իսկ սա նշանակում է, որ ժամանակակից աշակերտի մոտ պետք է ձևավորվի ունիվերսալ ուսումնական

1. [1]Մինասյան Ա. «Աշխարհագրության ուսուցման մեթոդիկա», Երևան 2013 թ

գործունեություն, որն ապահովում է ինքնուրույն ուսումնական գործունեություն կազմակերպելու կարողություն։

Այժմ, նոր չափանիշներին համապատասխան, նախ և առաջ անհրաժեշտ է ուժեղացնել աշակերտի մոտ մոտիվացիան՝ սովորելու իրեն շրջապատող աշխարհը, ցույց տալ նրան, որ դպրոցական աշխատանքը կյանքից վերցված գիտելիքներ ձեռք բերելը չէ, այլ ընդհակառակը, կյանքի համար անհրաժեշտ նախապատրաստությունն է, դրա ճանաչումը, օգտակար տեղեկատվության որոնումը և այն իրական կյանքում կիրառելու հմտությունները։

Եթե ուսուցիչն անցյալում տուժում էր նորագույն մեթոդական գրականության պակասից, դասավանդման մեթոդների սահմանափակ լինելուց, ապա այսօր նրանից հսկայական ջանքեր են պահանջվում՝ ճիշտ կողմնորոշվելու այսօրինակ մոտավոր տեղեկատվության, դպրոց մուտք գործած ուսուցման տարատեսակ մեթոդներ, դասերի կազմակերպման մոլորեցնող ձևերի խայտաբղետության մեջ։[2]

Աշխարհագրության ուսուցման մեթոդիկայում գոյություն ունի և կիրառվում է ուսուցման մեթոդների երկու դասակարգում՝

1. ըստ գիտելիքի ստացման աղբյուրի
2. ըստ սովորողների իմացական գործունեության բնույթի, որը պայմանավորված է գիտելիքի յուրացման տարբեր մակարդակներով։

Ըստ գիտելիքի ստացման աղբյուրի։ Աշխարհագրության ուսուցման մեթոդիկան մշտապես օգտագործելու է այն մեթոդները, որոնք աշխատում են գիտելիքի ստացման աղբյուրների հետ, քանի որ նրանցում նյութը ներկայացված է ըստ գիտական աշխարհագրության տրամաբանության և անհնար է ուսումնասիրել գիտության հիմունքներն առանց դրա աղբյուրների օգտագործման։ Նշված մեթոդների խմբերը՝ խոսքային, զննական և գործնական, անվանում ենք «ավանդական մեթոդական համակարգ»։

Ըստ սովորողների իմացական գործունեության բնույթի։ Հասարակությունը դպրոցից պահանջում է շրջահայաց, զարգացած, ստեղծագործական մտածողությամբ օժտված քաղաքացու պատրաստում, ինչը հնարավոր է իրականացնել միայն զարգացնող ուսուցման եղանակով և համապատասխան ուսուցման եղանակով և

[2] Մասնակցային դպրոց

համապատասխան ուսուցման մեթոդներով: Այս դասակարգումը հաշվի է առնվում աշակերտի իմացական գործունեության բնույթը տարբեր տարիքում: Աշխարհագրության ուսուցման մեթոդիկայում, ըստ սովորողների իմացական գործունեության բնույթի, մեթոդները միավորվում են երկու խոշոր խմբերի մեջ՝

1. **բացատրացուցադրական մեթոդների խումբ՝** բացատրացուցադրական և ռեպրոդուկտիվ կամ վերհիշական մեթոդներ,
2. **ստեղծագործական մեթոդների խումբ՝** պրոբլեմային շարադրանքի, մասնակի-որոնողական և հետազոտական մեթոդներ:[3]

Ցանկացած թեմայի ուսումնասիրություն կարելի է կազմակերպել ամենատարբեր մեթոդներով, ուսուցիչն ազատ է մեթոդների ընտրության հարցում, սակայն ընտրությունը չի կարող ինքնանպատակ, կամայական լինել: Շատ կարևոր է մեթոդի ճիշտ և նպատակահարմար ընտրությունը:[4]

Ներկայումս օբյեկտիվ անհրաժեշտություն է ուսուցման ավանդական մեթոդների և եղանակների հետ համատեղ աշխարհագրության ուսուցման մեջ ներդնել ուսուցման ժամանակակից փոխգործուն մեթոդներ և եղանակներ, որոնք նպատակ ունեն բարձրացնելու ուսուցանվող նյութի յուրացման արդյունավետությունը և հնարավորություն են ընձեռում ուսուցիչներին՝ ուսուցման կազմակերպման դասարանային եղանակի պայմաններում կիրառելու զանազան հնարներ՝ ուսուցման պրոցեսն առավել հետաքրքիր դարձնելու նպատակով: [5]

1.2 Ուսուցման գործնական մեթոդներ և նրանց անցկացման ձևերը աշխարհագրության դասերին

Ուսուցման գործնական մեթոդների կիրառումը ուսումնական գործընթացի անբաժանելի մասն է: Ուսուցման գործնական մեթոդների էությունը նոր գիտելիքների կիրառման առաջին փորձի ձեռքբերումն է: Գործնական ուսուցման մեթոդի նպատակը տեսական մակարդակով ձեռք բերված հմտությունների մշակումն է՝ դրանք կյանքում արագ և հեշտությամբ կիրառելու համար: Որպես մանկավարժական երևույթ՝ գործնական աշխատանքը մի կողմից ուսումնական

[3]Մինայսան Ա. «Աշխարհագրության ուսուցման մեթոդիկա», Երևան 2013 թ
[4] Ա.Հովսեփյան,Մ.Մանասյան Աշխարհագրություն Ուսուցչի ձեռնարկ 9- րդ դասարան Երևան 2013թ
[5] Ա.Հովսեփյան,Խ.Սարգսյան,Գ.Հովհաննիսյան, Աշխարհագրություն Ուսուցչի ձեռնարկ

առաջադրանք է, այսինքն՝ այն, ինչ պետք է անի աշակերտը, մյուս կողմից՝ առաջադրանքի կատարման ընթացքում համապատասխան գործունեության՝ հիշողության, մտածողության ստեղծագործական երևակայության դրսևորման ձև, որն արդյունքում աշակերտին տալիս է միանգամայն նոր, նախկինում նրան անծանոթ գիտելիքներ, կամ էլ արդեն ունեցած գիտելիքների խորացում:

Գործնական մեթոդներին լրացնում են այլ մեթոդներ՝ բարձրացնելով ուսուցման արդյունավետությունը:[6]

Ուսուցման գործնական մեթոդները լուծում են հետևյալ խնդիրները.

1. փաստացի գործընթացների և երևույթների իմացություն,
2. գիտելիքների խորացում,
3. նոր հմտությունների ձևավորում,
4. փորձի ձեռք բերում.

Գործնական ուսուցման մեթոդը արագ սովորելու արդյունավետ միջոց է: Գործնական ուսուցման մեթոդների արդյունավետությունը հաստատվել է բազմաթիվ փորձերով և, ըստ ուսումնասիրված նյութի յուրացման չափանիշի, արդյունավետությունը կազմում է 70-90%:[7]

Գործնական մեթոդներն օգտագործվում են բանավոր և տեսողական ուսուցման մեթոդների հետ սերտ համադրությամբ, քանի որ վարժությունների իրականացման, փորձի, աշխատանքային գործունեության վերաբերյալ գործնական աշխատանքին պետք է նախորդի ուսուցչի ուսուցողական բացատրությունը:[8]

Գործնական մեթոդի օգնությամբ կարող ենք զգալիորեն խորացնել առկա հմտություններն ու գիտելիքները, կատարելության հասցնել առաջադրանքների որակը, սովորել բացահայտել և ուղղել սխալները և ավելի լավ վերահսկել աշխատանքը, ինչպես նաև ակտիվացնել նոր գիտելիք ստանալու ցանկությունը:

Գործնական մեթոդները ուսուցչի և աշակերտի փոխկապակցված գործողություններ են, որոնք ունեն իրենց առանձնահատկությունները.

[6] https://edprodpo.com
[7] https://edprodpo.com
[8] https://studfile.net

1.ուսուցիչը ձևակերպում է խնդիրը ու կազմակերպում աշակերտի գործունեությունը, որն ուղղված է քարտեզի, նկարի, մոդելի կամ այլ օբյեկտի հետ նախատեսվող աշխատանքի եղանակների յուրացմանը:

2.ուսուցիչը առաջադրում է խնդիր, որի լուծման համար պետք է օգտվել քարտեզից, նկարից, մոդելից կամ այլ օբյեկտից՝ կիրառելով աշխատանքի՝ արդեն իսկ յուրացված եղանակները:[9]

Խոշոր թեմատիկ հատվածի ուսումնասիրությունն ավարտելուց անմիջապես հետո նպատակահարմար է իրականացնել գործնական աշխատանք, քանի որ այն պետք է ունենա ընդհանրացման բնույթ: Այն կարող է իրականացվել ոչ միայն դասարանում, այլև դրանից դուրս, օրինակ՝ դպրոցի տարածքում կամ տարածքից դուրս:[10] Օրինակ՝ 9-րդ դասարանում «Հայաստանի Հանրապետության բնությունը» գլուխը ավարտելուց հետո կատարել գործնական աշխատանք, կախված հնարավորություններից այն կարող է իրականացվել բնության գրկում:

- **Ուսուցման գործնական մեթոդների տեսակները:**

Ուսումնական գործընթացում կիրառվում են այնպիսի գործնական մեթոդներ, ինչպիսիք են.

1. վարժություններ,
2. լաբորատոր աշխատանքներ,
3. գործնական աշխատանքներ,
4. կրթական և աշխատանքային առաջադրանքներ,
5. ուսումնական խաղեր,

Այս մեթոդներից յուրաքանչյուրն ունի իր առանձնահատկությունները: [11]

Այս մեթոդներում աշխարհագրության դասերին գիտելիքների ստացման գլխավոր աղբյուր են հանդիսանում աշխարհագրական իրականությունը (բնական և հասարակական) ու նրա մոդելները (քարտեզներ, պրոֆիլներ, գրաֆիկներ, մանրակերտեր և այլն): Ուսուցման գործընթացում կիրառվում են աշխարհագրական

[9]Մինայսան Ա. «Աշխարհագրության ուսուցման մեթոդիկա», Երևան 2013 թ
[10] https://zaochnik.com

[11] https://wiki.fenix.help

իրականությունն արտացոլող մոդելներ, որոնք ներկայացված են հատուկ մշակված ուսումնական պարագաների ձևով:

Աշխարհագրության ծրագրերում ընդգրկված պրակտիկ աշխատանքը հնարավորություն է տալիս գործնական գործունեություն՝ տեղում աշխատանք, բնության և արտադրության դիտարկումներ, ըստ հատակագծերի և քարտեզների կոնկրետ խնդիրների լուծում, վիճակագրական և տնտեսական ցուցանիշների հետ աշխատանք:[12]

Աշխարհագրության դասերին գործնական մեթոդների իրացման հարցում մեծ դեր ունեն **գործնական աշխատանքները**, որոնք կատարվում են դասարանում, տեղանքում, արտադրական և ոչ արտադրական ոլորտի ձեռնարկություններում: Գործնական աշխատանքները ուսուցման կազմակերպման ձև են:[13]

Դիտարկենք գործնական աշխատանքների առավելությունները.

- Այն հնարավորություն է տալիս առավել ուշադիր պլանավորել աշխատանքային ընթացքը, կազմել աշխատանքային պլաններ և ժամանակացույցեր,
- Վերլուծել և հասկանալ առավել առանցքային նպատակների և խնդիրների նպատակադրումը, ինչպես նաև տալ այդ խնդիրների լուծման տարբեր հնարներ ու մեթոդներ,
- Ձեռք բերել կամ պատրաստել համապատասխան գործիքներ և այլ նյութեր,
- Ձևավորում է հմտություններ վերահսկելու կատարված աշխատանքի որակը, վերլուծել արդյունքները, կատարել եզրակացություններ և հարկ եղած դեպքում ուղորդել դեպի ճիշտ գործողությանը:

Ներկայացնենք գործնական աշխատանքի կազմակերպման դասի օրինակ:

6-րդ դասարանում «Աֆրիկա», «Ավստրալիա», «Անտարկտիդա» թեմաների կրկնության և ամփոփման համար:

Օրինակ 1.Դասարանը բաժանել 3 խմբի՝ համապատասխանաբար «Մենք ենք աֆրիկացիները», «Շրջենք Ավստրալիայով», «Մենք ու հարավի սառույցները» անուններով և խմբերում ընդգրկել ուսումնական նյութի յուրացման տարբեր

[12] https://urok.1sept.ru/articles/314910

[13] Մինայսան Ա. «Աշխարհագրության ուսուցման մեթոդիկա», Երևան 2013 թ

մակարդակ ունեցող աշակերտներ: Յուրաքանչյուր խումբ պատասխանելու է նախօրոք կազմված առանցքային հարցերին: Ընդհանուր լինելու է 10 հարց, իսկ գնահատումը՝ ըստ հարցի բարդության: Աշխատանքը իրականացնելու համար անհրաժեշտ է դիդակտիկ պարագաներ՝ ուրվագծային քարտեզներ, գունավոր մատիտներ և գրիչներ, A4 կամ A3 մասշտաբի թղթեր և այլն: Աշխատանքը ավարտելուց հետո խմբի ավագները ներկայացնելու են կատարված աշխատանքը ամբողջական պատկերով:

Տարբերակվում է նաև **ուսուցողական, վարժեցնող և ամփոփիչ գործնական աշխատանքներ** , որոնք համապատասխանաբար ուղղված է գործողության եղանակի յուրացմանն ու կարողության ձևավորմանը, հմտության ձևավորմանը և դրանց կիրառմանը նոր պայմաններում:

Գործնական աշխատանքների յուրահատկությունը կայանում է նրանում, որ դրանք լավագույնս դրդում են սովորողներին բարեխիղճ գործունեությանը՝ նպաստելով աշխատանքում այնպիսի կարևոր հատկությունների զարգացմանը, ինչպիսիք են խնայողությունը, ազատ ստեղծագործելու ունակությունը և աշխատասիրությունը :[14]

Աշխարհագրական գիտելիքների յուրացման, մտապահման ու կիրառման գործընթացում կարող են կիրառվել նաև տարբեր **ուսումնական խաղեր**: Սովորողները կարող են լուծել հանելուկներ, մրցել առաջադրանքի կատարման արագությամբ (աշխարհագրական օբյեկտների անունների թվարկման քանակով): Փորձը ցույց է տվել, որ 5-6-րդ դասարաններում դրանք հետաքրքրություն են առաջացնում ուսման նկատմամբ, ճանաչողական խնդիրների լուծման նկատմամբ, ստեղծում են լարված աշխատանքի մեջ անհրաժեշտ հանգիստ:

Աշխարհագրության դասերին որպես գործնական աշխատանք կարող են հանդիսանալ՝

- **Քարտեզների պատրաստումը**: Այսպիսի աշխատանքը նպաստում է աշխարհագրական նյութի մտապահելուն: Ուրվագծային քարտեզների վրա

[14] https://wiki.fenix.help/

սովորողները գրանցում են ուսումնասիրված տվյալները, դրա հետ միասին աշակերտները ինքնուրույն պատրաստում են ոչ բարդ քարտեզներ,

- **Գրաֆիկների և սխեմաների, աղյուսակների կազմումը:** Այդպիսի աշխատանքներ կատարվում են ինքնուրույն դիտումների, վիճակագրական տվյալների օգտագործման միջոցով:
- **Ալբոմների, ստենդների, պլակատների պատրաստումը:** Այսպիսի աշխատանքներ աշխարհագրությունից կատարվում են բոլոր դասընթացներից, բոլոր դասարաններում: Ալբոմների և ստենդների պատրաստումը պետք է կատարել բարձր դասարաններում, որովհետև դրանք պահանջում են բազմաբովանդակ և բազմաբնույթ նյութերի հավաքում: Նյութեր, որոնց մեծ մասը պետք է վերցնել թերթերից, ամսագրերից, դրոշմանիշներից, գովազդներից: Այդպիսի նյութերը կարող են վերաբերել առանձին վերցրած երկրին(Ֆրանսիայի ալբոմ, ԱՄՆ-ի ալբոմ):[15]

Գործնական մեթոդները արդիականացնում են դպրոցական աշխարհագրություն առարկան և մատնանշում նրա կիրառական նշանակությունը: Գործնական մեթոդների կիրառումը արդյունավետ է միայն այն դեպքում, երբ սովորողները տիրապետում են ուսումնական աշխատանքի այնպիսի հնարներին, որոնք ընկած են աշխարհագրական կարողությունների և հմտությունների հիմքում: Գիտելիքի աղբյուրից տեղեկություն կորզելու համար, պետք է հասկանալ նրանում պարունակվող աշխարհագրական տեղեկության առանձնահատկությունը: Գործնական մեթոդների լայն կիրառման համար անհրաժեշտ է համապատասխան նյութական բազա՝ կահավորված աշխատատեղ, սարքերի և սարքավորումների առկայություն տեղանքի հանույթն իրականացնելու համար (պլանշետ, կողմնացույց, չափաժապավեն, քարտեզներ և այլ դիդակտիկ պարագաներ):

[15] https://lib.armedu.am/

ԳԼՈՒԽ 2

ԳՈՐԾՆԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹՅԱՆ ԴԱՍԵՐԻՆ

2.1 Գործնական աշխատանքների կազմակերպումը 6-րդ դասարանի «Մայրցամաքների և օվկիանոսների աշխարհագրության» դասերին:

6-րդ դասարանում աշխարհագրական գիտելիքներ փոխանցվում են բուն աշխարհագրություն առարկայի շրջանակներում: Դասընթացի համապատասխան բաժինը կոչվում է «Աշխարհագրական թաղանթ: Մայրցամաքներ և օվկիանոսներ»:

Դասընթացի առաջին թեման աշխարհագրական թաղանթն է և մարդը աշխարհագրական թաղանթում: Ներկայացված է աշխարհագրական թաղանթի կառուցվածքը, հատկանիշները, զարգացումը, պլատֆորմները և գեոսինկլինալները, կլիմայական գոտիները, աշխարհագրական գոտիականությունը, զոնայականությունը, մարդու ազդեցությունը լանդշաֆտների վրա, մարդածին լանդշաֆտները: Երկրորդ թեման ներկայացնում է յուրաքանչյուր մայրցամաքի աշխարհագրական դիրքը և ափագիծը, երկրաբանական կառուցվածքը, մակերևույթը, կլիման, կլիմայական գոտիները, ներքին ջրերը, բնական զոնաները, հողաբուսական ծածկույթը, կենդանական աշխարհը: Իսկ վերջին թեման ամբողջական գաղափար է տալիս օվկիանոսների մասին:

Այս դասընթացում գործնական աշխատանքների կազմակերպումը նպաստում է աշակերտների մոտ զարգացնել ինքնուրույն աշխատելու հմտությունները, ստեղծագործական հմտությունները և նպաստում է մատուցվող նյութի ավելի լավ ամրապնդմանը:

Գործնական աշխատանքի մեկ օրինակ 6-րդ դասարանի համար ներկայացրել ենք հավելված 1-ում:

2.2 Գործնական աշխատանքների կազմակերպումը 7-րդ դասարանի աշխարհագրության դասերին

Միջին օղակի աշխարհագրության դասընթացը շարունակվում է 7-րդ դասարանում, բաժինը կոչվում է «Հասարակական աշխարհագրություն: Աշխարհ»: Դասընթացի շրջանակներում ուսումնասիրվում է աշխարհի քաղաքական բաժանումը, աշխարհի բնակչությունը, թիվը և շարժը, սեռատարիքային, ազգային, ռասսայական և կրոնական կազմը, աշխարհի բնական պայմաններն և բնական ռեսուրսները, համաշխարհային տնտեսությունը իր ճյուղային և տնտեսական կառուցվաքի հետ միասին և վերջին բաժնում միջազգային տնտեսական համագործակցությունը:

Սույն դասընթացում գործնական աշխատանքների կազմակերպումը հնարավորություն կտա սովորողներին ինքուրույն ձևով տարբեր աղյուսակների, գրաֆիկների և տարբեր թեմատիկ քարտեզների վերլուծությամբ ձեռք բերել նոր գիտելիքներ, նոր կարողություններ, վերլուծելու, տրամաբանելու, համեմատելու և համադրելու հմտություն: Քարտեզների, պաստառների և տարբեր ալբոմների պատրաստումը հնարավորություն կտա սովորողներին աշխատել, հավաքել այլ աղբյուրներից տեղեկություն, վիճակագրական տվյալներ և փաստեր տարբեր ոլորտների վերաբերյալ: Արդի տեխնոլոգիաները պայմաններ են ստեղծում տարբեր ծրագրերի միջոցով, ուսուցիչների օգնությամբ սովորել կազմել աղյուսակներ, գրաֆիկներ և քարտեզներ, որոնք կնպաստեն ստեղծել ոչ միայն միջառարկայական կապեր (օրինակ աշխարհագրություն և ինֆորմատիկա առարկաների միջև), այլև համընթաց քայլել ժամանակի հետ:

Մեր կողմից մշակված գործնական աշխատանքի մեկ օրրինակ 7-րդ դասարանի համար ներկայացրել ենք հավելված 2-ում:

2.3 Գործնական աշխատանքների կազմակերպումը 8-րդ դասարանի «Ռեգիոնալ աշխարհագրության» դասերին

Տարածաշրջանային աշխարհագրության դասընթացի գլխավոր նպատակը կոնկրետ տարածաշրջանի կամ երկրի հստակ ու իրական «դիմանկարի՝ հասարակական-աշխարհագրական համալիր բնութագրի ձևավորումն է:[16] Դասընթացում ներկայացվող գիտելիքներն են՝ յուրաքանչյուր տարածաշրջանի ընդհանուր բնութագիրը, բնական պայմաններն ու ռեսուրսները, բնակչությունը, տնտեսությունը և առկա էկոլոգիական խնդիրները:

Ներկայումս օբյեկտիվ անհրաժեշտություն է դասավանդման ավանդական մեթոդների և եղանակների հետ համատեղ աշխարհագրության ուսուցման մեջ ներդնել ուսուցման ժամանակակից ինտերակտիվ մեթոդներ և եղանակներ, որոնք նպատակ ունեն բարձրացնելու ուսուցանվող նյութի յուրացման արդյունավետությունը և հնարավորություն կընձեռեն ուսուցիչներին՝ ուսուցման կազմակերպման դասարանային եղանակի պայմաններում կիրառել զանազան հնարներ՝ դասավանդման պրոցեսն ավելի հետաքրքիր դարձնելու նպատակով:[17]

Գործնական աշխատանքների կազմակերպումը ևս հնարավորություն է տալիս խորացնելու տեսական գիտելքիները և հենվելով տեսական գիտելիքների վրա՝ ձեռք բերել որոշակի հմտություններ ու կարողություններ: Հենց այս դասընթացում, քանի որ ուսուցման կազմակերպումը իրականացվում է դասարանային պայմաններում, գործնական աշխատանքները խթան են հանդիսանում աշխատանք կատարել վիճակագրական տվյալների, աղյուսակների, գծագրերի և տարբեր նշանակության քարտեզների հետ: Այդպիսի աշխատանքները նպաստում են աշակերտների մոտ ամբողջական պատկերացում կազմել աշխարհի քաղաքական քարտեզի մասին, հնարավորություն է տալիս աշխարհայացքային գիտելիքներ ունենալ տարբեր պետությունների, նրանց զարգացման տեմպի և աշխարհում զբաղեցրած «դիրքի» մասին: Դասընթացում ներառված են ՀՀ հարևան չորս պետությունները, որոնց մասին

[16] Մանասյան Մ., Մարգարյան Ռ. Հովսեփյան Ա., Հովհաննիսյան Գ. «Աշխարհագրությոն 8», «Մանմար» Երևան 2018

[17] Ա. Հովսեփյան, Գ. Հովհաննիսյան, Ռ. Մարգարյան, Մ. Մանասյան «Աշխարհագրություն 7-8, ուսուցչի ձեռնարկ», «Մանմար» Երևան 2013

կայուն գիտելիքներն ու դրանց հիման վրա գործնական կարողությունների ձևավորումը ամուր հենարան է ստեղծված իրավիճակը ճիշտ գնահատելու, որոշակի կանխատեսումներ իրականացնելու համար: Հատկանշական է մեջբերել Սուն Ցզինի խոսքերը «Եթե գիտես հակառակորդիդ, ուրեմն գիտես ինքդ քեզ, և հարյուրավոր մարտերում վտանգի մեջ չես լինի: Եթե դու չգիտես ոչ հակառակորդիդ և ոչ էլ քեզ, ապա հիշիր, որ յուրաքանչյուր անգամ դու ենթարկվելու ես վտանգների»:

Մեր կողմից առաջարկված գործնական աշխատանքների մի քանի տարբերակները կարտացոլեն դրանց հետաքրքրաշարժությունն ու կարևորությունը դասապրոցեսի ամրապնդման հարցում:

Գործնական աշխատանքի մեկ օրինակ ներկայացված է հավելված 3-ում:

2.4 Գործնական աշխատանքների կազմակերպումը 9-րդ դասարանի Հայաստանի աշխարհագրության դասերին

9-րդ դասարանում աշխարհագրության համապատասխան դասընթացը կոչվում է «Հայաստանի աշխարհագրություն»: Դասընթացը կոչված է համապարփակ և ամբողջական գիտելիքներ հաղորդելու հայոց բնօրրանի՝ Հայկական լեռնաշխարհի բնության առանձնահատկությունների, բնական երևույթների բացառիկ բազմազանության մասին: Առավել խորությամբ ներկայացված են Հայաստանի և Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունների բնության, բնակչության և տնտեսության տարածական կառուցվածքի առանձնահատկությունները, բնօգտագործման և բնապահպանության տարաբնույթ հիմնախնդիրները: Այս դասընթացի միջոցով միաժամանակ խորացվում են սովորողների գիտելիքները բնական և հասարակական մի շարք երևույթների մասին և դիտարկվում են Հայաստանում դրանց տարածաժամանակային դրսևորումները: [18]

Հայաստանի աշխարհագրության լավ իմացությունը կօգնի ճիշտ գնահատել մեր երկրի տեղն ու դերը աշխարհում, ճանաչել նրա բնական պայմաններն ու

[18] Մանասյան Մ. Հովսեփյան Ա. « Հայաստանի աշխարհագրություն 9, ուսուցչի ձեռնարկ», «Տիգրան Մեծ» Երևան 2014

հարստությունները, հասկանալ բնակչության ու տնտեսության տեղական առանձնահատկությունները և զարգացման խնդիրները։ [19]

Գործնական աշխատանքների կազմակերպումը ուղղված է հայրենաճանաչողությանը, հայրենիքի պահպանությանն ու խորը ուսումնասիրությանը։ Գործնական աշխատանքների ժամանակ աշխատանք է տարվում Հայկական լեռնաշխարհի և Հայաստանի թեմատիկայով ուրվագծային քարտեզների հետ, աղյուսակների կազման և վիճակագրական տվյալների վերլուծության հետ, բնության, արդյունաբերական ու գյուղատնտեսական ձեռնարկությունների ճանաչումը արտադասարանական պարապմունքների միջոցով։ Ուսուցման գործնական մեթոդները հնարավորություն են տալիս հայրենիքի մասին գիտելիքներ ձեռք բերել տարբեր գրականությունից և համացանցից։ Այն օգնում է սովորողին առավել խորությամբ ճանաչել և ճիշտ գնահատել նրա զարգացման հեռանկարներն ու իրական հնարավորությունները։ Հասկանալ և վերլուծել մեր առջև դրված մարտահրավերներն ու կարողանալ տալ լուծման ուղիներ։ Գործնական կարողությունների ձևավորումը միտված է նաև հայրենիքի հզորացմանն ու բարգավաճմանը, հայրենի բնության պահպանմանն ու մաքրությանը։ Ձեռք բերած տեսական գիտելիքները ուղել ի նպաստ հայրենիքում առկա ռեսուրսների և պայմանների խելամիտ օգտագործմանը։ Գործնական աշխատանքների հիման վրա աշակերտները կարող են կազմել և իրագործել տարբեր ծրագրեր, որոնք այլընտրանքային են, համապատասխանում են ժամանակի պահանջներին և նպաստում հայրենիքի զարգացմանը։ Օրինակ, բոլոր դասարաններում և հատկապես 9-րդ դասարանում շաբաթօրյակների կազմակերպումը օգնում է աշակերտներին ճանաչել հայրենի երկրի, քաղաքի և գյուղի շրջակա միջավայրը, համապատասխան միջոցառումներ կազմակերպել բնության տարրերի, պատմամշակութային հուշարձանների պահպանման համար և այլն։ Արտադասարանական պարապմունքների ժամանակ ծանոթացումը, ինչպես նաև մասնակցությունը որևէ արդյունաբերական կամ գյուղատնտեսական ձեռնարկության աշխատանքներին աշակերտների մոտ նպաստում է այն գաղափարի

[19] Խաչիկ Նազարյան, Լեմվել Վալեսյան «Հայաստանի աշխարհագրություն 7, գիրք առաջին», Երևան «Լույս» 1999

հաստատմանը, որ իրենց հայրենիքը ունի մեծ ներուժ զարգանալու, համընթաց քայլելու ժամանակի հետ:

Կան այնպիսի գործնական աշխատանքներ, որոնք արտացոլում են ծրագրի պահանջները, բայց դրանք կարող են նոր լինել բովանդակությամբ, իսկ կան այնպիսի գործնական առաջադրանքներ, որոնք պահանջում են ստեղծագործական հմտություններ:

Գործնական աշխատանքի մեկ օրինակ 9-րդ դասարանի համար ներկայացրել ենք հավելված 4-ում:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Կատարված ուսումնասիրություններից եկել ենք հետևյալ եզրակացությունների.

1. Սովորողների մոտ գործնական հմտությունների ձևավորումը գործնական աշխատանքների միջոցով պետք է ձևավորվի դեռևս վաղ տարիքից։
2. Գործնական աշխատանքները ունեն դաստիարակող, ուսուցանող և կրթող բնույթ։
3. Գործնական աշխատանքներ կազմակերպելիս անհրաժեշտ է հաշվի առնել սովորողների տարիքային առանձնահատկությունները, քանզի այդ ամենից ելնելով որոշվում է կազմվող աշխատանքի բարդության աստիճանը։

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Մինայսան Ա. «Աշխարհագրության ուսուցման մեթոդիկա», Երևան 2013 թ:
2. Ա.Հովսեփյան,Մ.Մանասյան Աշխարհագրություն Ուսուցչի ձեռնարկ 9- րդ դասարան Երևան 2013թ:
3. Ա.Հովսեփյան,Խ.Սարգսյան,Գ.Հովհաննիսյան, Աշխարհագրություն Ուսուցչի ձեռնարկ:
4. Մանասյան Մ. Հովսեփյան Ա. « Հայաստանի աշխարհագրություն 9, ուսուցչի ձեռնարկ», «Տիգրան Մեծ» Երևան 2014
5. Խաչիկ Նազարյան, Լեմվել Վալեսյան «Հայաստանի աշխարհագրություն 7, գիրք առաջին», Երևան «Լույս» 1999:
6. Մանասյան Մ., Մարգարյան Ռ. Հովսեփյան Ա., Հովհաննիսյան Գ. «Աշխարհագրությոն 8», «Մանմար» Երևան 2018:
7. Ա. Հովսեփյան, Գ. Հովհաննիսյան, Ռ. Մարգարյան, Մ. Մանասյան «Աշխարհագրություն 7-8, ուսուցչի ձեռնարկ», «Մանմար» Երևան 2013:
8. Էկոկրթության ուսումնաօժանդակ ձեռնարկ, «Գեոֆոն» ՀԿ, Գյումրի 2006
9. https://edprodpo.com
10. https://studfile.net
11. https://zaochnik.com
12. https://wiki.fenix.help
13. https://urok.1sept.ru/articles/314910
14. https://lib.armedu.am/

Հավելված 1

ԳՈՐԾՆԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Երկրաբանական ժամանակագրություն

Ներկայացված գործնական աշխատանքի նպատակն է ամբողջական պատկերացում կազմել , թե ե՞րբ և ինչպե՞ս են առաջացել ու զարգացել Երկիրը, նրա աշխարհագրական թաղանթը, մայրցամաքները, օվկիանոսները, կյանքը և, վերջապես, մարդը։

<u>Առաջադրանք 1.</u> Լրացնել աղյուսակը։

Դարաշրջանի անվանումը (տևողությունը՝ մլն տարի)	**Ժամանակա-շրջանի անվանումը**	**Ժամանակա-շրջանի տևողությունը (մլն տարի)**	**Ժամանակա-շրջանի ավարտը (մլն տարի առաջ)**	**Էական փոփոխություններ**
Կայնոզոյան (67)	Չորրորդական Նեոգեն Պալեոգեն	1,5-3,5 21,5-23,5 42	0 1,5-3,5 25	Ծածկասերմ բույսերի բուռն զարգացումը, կաթնասունների հայտնվելը, մարդու առաջացումը, ալպյան լեռնակազմությունը։

Հավելված 2

ԳՈՐԾՆԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Բնակչության ռասսակայան, ազգային և կրոնական կազմը

Գործնական աշխատանքը կազմված է լինելու մի քանի առաջադրանքներից՝ իր մեջ ամփոփելով ամբողջական թեման։

Աշխատանքի նպատակը։

- ✓ Զարգացնել աղյուսակների, գրաֆիկների, գծագրերի հետ աշխատելու կարողություններն ու հմտությունները։
- ✓ Հմտանալ տրամաբանելու, վերլուծելու, համեմատելու և համադրելու գործընթացներում։

Աշխատանքի կառուցվածքը.

Առաջադրանք 1. Լրացնել աղյուսակը։

Բնակչության ռասսայական կազմը

Ռասսա	Տարածման շրջանները	Արտաքին մարդաբանական հատկանիշները	Այլ տեղեկություն
Նեգրոիդ	Կենտրոնական և Հարավային Աֆրիկա	Մաշկի մուգ գույն, գանգուր մազեր, լայն քիթ, հաստ շուրթեր	Նեգրոիդ ռասսայի մազերի գանգրությունը ուժեղ արևից պաշտպանվելու ջերմամեկուսիչ միջոց է։

Առաջադրանք 2: Աշխարհի լեզվական կազմը ուսումնասիրելուց հետո ընտրել մեկ լեզվաընտանիք և ներկայացնել լեզուների կապն ու ճյուղավորումը՝ լեզվաընտանիքների ծառի տեսքով:

Օրինակ.«Հնդեվրոպական լեզվաընտանիքի ծառը»



Հավելված 3

ԳՈՐԾՆԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

«Եվրոպա»

Սույն գործնական աշխատանքը նպատակահարմար է կազմակերպել Եվրոպա աշխարհամասը ամբողջովին ուսումնասիրելուց հետո: Այս օրինակը կիրառելի է նաև մյուս աշխարհամասերի և տարածաշրջանների ուսումնասիրման ժամանակ:

Աշխատանքի նպատակը ՝

1. Կարողանալ ինքնուրույն աշխատանք տանել ուրվագծային քարտեզների և աղյուսակների հետ:
2. Զարգացնել վերլուծելու և համեմատելու հմտությունները:

Աշխատանքի բովանդակությունը: Աշխատանքը կազմված է մի քանի առաջադրանքներից և համապատասխանում է ծրագրային նյութին: Աշխատանքը կատարվելու է դասասենյակում, իսկ ամբողջովին չհասցնելու դեպքում աշակերտները կշարունակեն տանը:

Առաջադրանք 1: **Ուրվագծային քարտեզի վրա նշել Հարավային և Արևելյան Եվրոպայի պետությունները:**



Առաջադրանք 2: Ըստ գծագրի դասավորել Եվրոպա աշխարհամասի երկրները՝ ելնելով բնակչության վերարտադրության ռեժիմից:

Նվազեցված վերարտադրության

Ընդլայնված վերարտադրության

Պարզ վերարտադրության

Հավելված 4:

ԳՈՐԾՆԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

ՀԱՅԿԱԿԱՆ ԼԵՌՆԱՇԽԱՐՀ

Գործնական աշխատանքը կազմված է մի քանի առաջադրանքներից:

Առաջադրանք 1: Ուրվագծային քարտեզի վրա նշել լեռներն ու նշանավոր գագաթները, գետերը և լճերը:



Առաջադրանք 2: Հայկական լեռնաշխարհի ֆիզիկական քարտեզի և վերընթաց լանդշաֆտային գոտիների քարտեզի օգնությամբ, ինչպես նաև ուսուցչի օգնությամբ լրացնել աղյուսակը:

Վերընթաց լանդշաֆտային գոտիների բնութագիրը

Վերընթաց լանդշաֆտային գոտիներ	Բացարձակ բարձրությունը մ	Կլիման	Հողերը	Բուսականությունը	Կենդանական աշխարհի ներկայացուցիչները
Մերձարևադարձային					
Անապատակիսաանապատային					
Տափաստանային					
Ա.Չոր տափաստանային					
Բ.Լեռնատափաստանային					
Լեռնաանտառային					
Մերձալպյան					
Ալպյան					
Ձյունամերձ					